Արձանագրություն N 3

«ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/09» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բարձր գնային առաջարկների նվազեցման շուրջ բանակցությունների նիստի

ք. Երևան **19.03.2019 թ.**
ժ. 14:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Մարտիրոսյան

Հանձնաժողովի անդամներ՝

Հ. Մուշեղյան
Հ. Խեչումյան
Ռ. Պողոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Սողոմոնյան

1. **«ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/09» ծածկագրով գնման ընթացակարգի բարձր գնային առաջարկների նվազեցման շուրջ բանակցությունների անցկացման մասին**

(Հ. Մարտիրոսյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ բարձր գնային առաջարկների նվազեցման շուրջ բանակցություններին էլեկտրոնային գնումների Armeps համակարգի (www.armeps.am) միջոցով և հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստից ծանուցմամբ հրավիրված էին մասնակցելու՝ **«Կոմպմարկետ» ՍՊԸ-ն՝** ընթացակարգի **2-րդ,** և **«Կոմպասս» ՍՊԸ-ն՝** ընթացակարգի **1-ին և 2-րդ** չափաբաժինների մասով:

1.2 «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն և «Կոմպասս» ՍՊԸ-ն համաձայնվել են նվազեցնել իրենց կողմից ներկայացված գնային առաջարկները՝ ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով՝ ներկայացնելով նոր գնային առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. **Մասնակիցների ներկայացրած նոր գնային առաջարկները հետևյալն են՝**

ՀՀ դրամ

Չափա-բաժին-ների համար-ները	Մասնակիցների անվանումները.	Մասնակիցների նվազեցրած գնային առաջարկները		
		Արժեքը	ԱԱՀ	Ընդհանուր գինը
2	«Կոմպասս» ՍՊԸ	119000,0	23800,0	142800,0
2	«Կոմպմարկետ» ՍՊԸ	119600,0	23920,0	143520,0

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. <u>Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը (հաշվի առնելով նվազեցված գնային առաջարկները)</u>

(Հ. Մարտիրոսյան)

3.1 «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/09» ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից առաջարկած գներն են:

Չափա-բաժին-ների համար-ները	*Չափաբաժնի անվանումը*	*Նախահաշվային գինը /ՀՀ դրամ/*	*Մասնակցի անվանումը, գնային առաջարկը*			
			1		2	
			«Կոմպմարկետ» ՍՊԸ		«Կոմպասս» ՍՊԸ	
			Առանց ԱԱՀ	*ԱԱՀ-ն ներառյալ*	*Առանց ԱԱՀ*	*ԱԱՀ-ն ներառյալ*
1	**անձնական համակարգիչներ**	**1650000**			1550000	1860000
2	**սկաներներ համակարգիչների համար**	**181000**	119600	143520	119000	142800
3	**լազերային տպիչներ**	**325000**	245000	294000	250000	300000

3.2 Հանձնաժողովը որոշեց գնահատման արդյունքները ամփոփելու նպատակով գնահատման թերթիկները լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3.3 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ հանձնաժողովը որոշեց ընթացակարգի **2-րդ** չափաբաժնի մասով **առաջին տեղ** զբաղեցնող մասնակից ճանաչել **«Կոմպասս» ՍՊԸ-ին**, իսկ **3-րդ** չափաբաժնի մասով **առաջին տեղ** զբաղեցնող մասնակից ճանաչել **«Կոմպմարկետ» ՍՊԸ-ին** որպես բավարար գնահատված և ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3.4 Հանձնաժողովը որոշեց ընթացակարգի **1-ին** չափաբաժինը հայտարարել չկայացած նախահաշվային գնից բարձր գնային առաջարկի հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3.5 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը հանձնաժողովը որոշեց՝ էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղ

զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.</u>
(Հ. Մարտիրոսյան)

Հանձնաժողովը որոշեց «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/09» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ՝ ընթացակարգի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացության տրամադրման և առաջին տեղ զբաղեցնող մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը և գնահատման թերթիկները հանձնաժողովի քարտուղարի կողմից հանձնաժողովի անդամներին տրամադրելուն հաջորդող 1-ին աշխատանքային օրը ժամը՝ 11:00-ին, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք, ՀՀ մշակույթի նախարարություն, 6-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝	Հ. Մարտիրոսյան	
Անդամներ՝	Ա. Ավալյան	
	Հ.Մուշեղյան	
	Հ. Խեչումյան	
	Ռ. Պողոսյան	

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Սողոմոնյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

շահերի բախման բացակայության մասին

Ք.Երևան **19.03.2019 թ.**

«ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/09» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Հ. Մարտիրոսյանս, անդամներ՝ Ա. Ավալյանս, Հ. Մուշեղյանս, Հ. Խեչումյանս, Ռ. Պողոսյանս և քարտուղար՝ Ա. Սողոմոնյանս նշված ծածկագրով գնանշման հարցման հայտերի բացման նիստից հետո հայտարարում ենք, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունենք շահերի բախում:

Հանձնաժողովի		
Նախագահ՝	Հ. Մարտիրոսյան	
Անդամներ՝	Ա. Ավալյան	
	Հ. Մուշեղյան	
	Հ. Խեչումյան	
	Ռ. Պողոսյան	
Քարտուղար	Ա. Սողոմոնյան	